

Այդ նոր ձեռի «գեղեցկութիւնը» շատ վիճելի է, մինչդեռ նրա տարօրինակ մթութիւնը խանգարում է՝ գրուածքից անմիջական տպաւորութիւն ստանալու բանաստեղծը այդպիսով մի թանձր քող է զցում ընթերցողի աշքերի առաջ և այդ վերջինից պահանջւում է լարել երևակայութիւնը և գլուխ կոտրել՝ թափանցելու համար՝ սիմբօններով թագնուած մոքերն ու զգացմունքները։ Միթէ այդ աւելորդ խոշընգուստները դէմ չեն դեղարուեատի ամենատարրական պահանջներին։ Հէ որ՝ ազդելու, տրամադրութիւն առաջացնելու բոլորովին հակառակ բան են այդ նորագոյն ձեռքը։ Մինչդեռ հեղինակի ընտրած նիւթը բանաստեղծական ամեն տեսակ ստեղծագործութիւնների համար, իրաւոր, կարող էր անսպառ աղքիւր լինել, մասաւանդ Պարիզում, եթէ միայն մամուլի ազատութիւնից դեկադենտուրէին մեր նոր գրողները, այլ՝ լրջօրեն...

Լ. Ս.

4) ԳԵՂՈՐԴ ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳԵԽԶԵՍՆ-ԳԵՐԱՄԱՅԻ հայ ուսանողութիւնը։ (Արաւապուած «Յարտզ»-ից), Թիֆլիզ, 1901, գինն է
20 կոպէկ։

Վաղուց է մեր թէ մամուլի և թէ հասարակութեան զանազան շրջաններում անդադար դժգոհութեան և բողոքի ձայներ են լսում հայ ուսանողութեան հասցէին—որ նա ընկած վիճակի մէջ է, զուրկ գաղափարական յափշտակութիւնից, դրական գործունէութեան տենչանքից, ջերմ, անվիճատ եռանդից, որ նա հասարակական իդէալների վերաբերմամբ սառն է, անհիւրընկալ և եսական, նիւթապաշտ ճգտումներով է միայն ոգեսորւում...

Բայց մի այնպիսի կարևոր խնդիր, ինչպիսին ժամանակակակից հայ ուսանողութեան վիճակն է, լուրջ, պատճառաբանող, վերլուծական ըննապատութեան բովից դեռ չէր անցել Այսպիսի մի փորձ մենք համարում ենք պ. Մելիք-Կարագեօվեանի գրքոյկը։

Հեղինակը՝ ինչպէս բացատրում է իր գրքի յառաջաբանում, շատ համեստ դիտաւորութիւն ունի—խօսել ոչ թէ ընդհանուր եւրոպական հայ ուսանողների, այլ բացառապէս Գերմանիայի հայ ուսանողութեան մասին։ Նա իր փաստային և վիճակագրական տեղեկութիւնների մի մասը քաղել է «Եւրոպայի հայ ուսանողական միութեան» տեղեկագրից, որ լոյս տեսաւ 1899 թուին։ Իսկ գլխաւորապէս հիմնուելով իր սեփական գի-

տողնութիւնների և տպաւորութիւնների վրայ՝ իր նպատակն է դրել ոչչ միայն տեղեկութիւններ տալ և նրանցից եղակացութիւններ հանել, այլ և, ըստ հնարաւորութեան, պարզ պատկեր տալ, թէ ինչ է անում, ինչպէս է ապրում, ինչ է զգում ու մըտածում Գերմանիայի հայ ուսանողութիւնը։ Հեղինակն այն կարծիքի է, որ «գերմանական հայ ուսանողի տիպը ընդհանուր է Գերմանիայի բոլոր քաղաքների համար», և որովհետև նրան ամենից շատ ծանօթ է Բերլինի հայ ուսանողութիւնը, այդ պատճառով նա կանգ է առնում առանձնապէս այս ուսանողութեան վրայ, որ բժուով ամենից հարուստ, արտադրել է և ամենից շատ գործունէութիւն և ամենից շատ է զարգացրել իր մէջ գաղափարների աւելի նուրբ տարրերութիւններ։

Պ. Մելիք-Կարագեօգեանի գիրքը բազկացած է հետևեալ հատուածներից—I. ընդհանուր տեսութիւն Եւրոպայի հայ ուսանողութեան վրայ. II. Բերլինի համալսարանը. III. Նորեկ ուսանողի առաջին օրերը Գերմանիայում. IV. Ինչով բացատրել մեր ուսանողների և գերման հասարակութեան մէջ շիման բացայութիւնը. V. մեր ուսանողների դասաւորումը Եւրոպայի բարձրագոյն դպրոցներում և մասնաւորապէս Գերմանիայում. VI. ուսանողական ընկերութիւններ. VII. «Եւրոպայի հայ ուսանողական միութիւնը». VIII. Գերմանիայի հայ ուսանողների կեանքից։

Մենք կանգ կ'առնենք այս հատուածներից միայն կարևորագոյնների վրայ։

Ընդհանուր տեսութեան մէջ տաճկահայ և ոռւսահայ ուսանողների միմեանցից ունեցած տարրերութիւնը, բնաւորութեան առանձնայատկութիւնները մնաց թւում է ճիշտ։ Նոյնը կարող ենք ասել նաև IV հատուածում առաջ բերուած գերմանական և հայ ցեղերի բնորոշման մասին։ Հայ ուսանողների և գերմանացիների մէջ շիման բացակայութիւնը հեղինակը բացադրում է մասամբ այս երկու ցեղերի բնաւորութեան և մասամբ առնասարակ եւրոպական և արեելեան կեանքի տարրերութեամբ։ Իբրև մի այլ պատճառ՝ հեղինակը մատնանիշ է անում և այն հանգամնաքը, որ գերմանացու և հայի ընդհանուր գաղափարներ և ձգտումներ չեն ներդաշնակում միմեանց հետ, մինչև իսկ ընդհանուր ձգտումների մասին խօսել անգամ չի կարելի։ **Մեզ թւում է սակայն, որ «չիման բացակայութեան» բնորոշ արգելափի՞ններից մէկը պարզապէս հայ ուսանողի անտարերութիւնն է։ Եթէ վերջինս կենդանի պահանջ ունենար շփուելու գերմանացու հետ, այն ժամանակ բնաւորութեան տարրերութիւնը և նոյնանման ուրիշ պատճառները՝ եթէ ոչ խիստ ձգո-**

զական, մտերմական, գոնէ վանողական ոչ մի դեր չէին կարող խաղալ, Զենք կարող չը խռատովանել նաև, որ կան ուսանողներ, որոնք անտարբեր չեն, ընդհակառակներին երբեմն բուռն կերպով ձգտում են շփուել օտարների հետ, բայց նրաքական արդիքների պատճառով ստիպուած են հեռու մնալ նրանցից։ Հեղինակը մատնանիշ անելով այն փաստը, որ կեներ ուսանողը, կամայ թէ ակամայ, չէ շփում ոչ գերմանական ուսանողների, ոչ էլ գերման հասարակութեան միջակ ու բարձր բուրժուազիայի հետօն գալիս է այն եղակացութեան, որ ինտէլիգէնսու շրջանը (գրողներ, հրապարակախօսներ, գիտականներ, արուեստագէտներ և այլն) նոյնպէս փակ է հայ ուսանողի համար։ Հեղինակն այս երեսիթը բացարում է նրանով՝ «որովհետև մեր ուսանող երիտասարդը փոխադարձաբար չէ կարող հետաքրքիր լինել այդ անձանց համար»։ Այս պատճառաբանութիւնը մեզ մի փոքր դեռ վիճելի է թւում. բանը նրանումն է, որ հայ ուսանողը գերմանական ինտէլիգէնսա շրջանում հէնց իր հայութեամբ կարող է հետաքրքիր լինել։ Գլխաւոր արգելատիթն, անշուշտ, ինտէլիգէնսու գերմանացու մշտագրադութիւնն է կամ ուրիշ խօսքով՝ ժամանակի պակասութիւնը, միւս կողմից այն հանգամանքը, որ Գերմանիայում միննոյն կոչման և պարապմունքի տէր մարդիկ սովորաբար, եթէ կարելի է ասել, չէզգքացած համախրմբումներ են կազմում. այսպէս ուսանողը աւելի շուտ ուսանողի հետ է տեսնուում և ընկերական կեանք վարում, հրապարակախօսը՝ հրապարակախօսի, բանաստեղծը՝ բանաստեղծի, երաժիշտը՝ երաժշտի, քաղաքագէտը՝ քաղաքագէտի, գիտականը՝ գիտականի հետ և այլն։ Հայ ուսանողը ունի սակայն մի յարմար առիթ ինտէլիգէնսու շրջանի յայտնի ներկայացուցիչների՝ պրօֆէսօրների հետ շփուելու։ Այս առիթը աւելի նպաստուոր է մանաւանդ այն դէպքում, երբ ուսանողը բացի համալսարանական դասախոսութիւններին յանձնելուց՝ մասնակցում է նաև գործնական պարապմունքներին, սեմինարական աշխատանքներին, ուր լայն ասպարէզ է բացուած պրօֆէսօրների հետ աւելի սերտ կերպով շփուելու և ծանօթանալու։

Մենք համաձայն չենք հեղինակի այն կարծիքին՝ թէ գերմանացի ոչ կօրպօրանատ ուսանողները «իրանց ուրով այնքան էլ շատ չեն զանազանուում կօրպօրատիւ ուսանողներից»։ Տարբերութիւնը շատ և շատ մեծ է։ Եթէ չը լինէր այս տարբերութիւնը կամ եթէ, թէօրալդ ծիցլերի ասելով, գերմանական բոլոր ուսանողական ընկերութիւնները «գարենջրային պետութիւն» ներկայացնէին, այն ժամանակ մարդ ակամայ հարց կը տար.

«Հապա որտեղից են առաջ գալիս այսքան նշանաւոր գիտնականներ, գրական, հասարակական գործիչներ և այլն»։ Բայց Կօրթից և Burschenschaft-ից, որոնց սկզբնաւորութիւնը հասնում է մինչև 18-րդ դարը, գերմանիայում գոյութիւն ունենական զանազան ազգայի մասնագիտական ընկերութիւններ (քաղաքատնտեսական, պատմական, լեզուաբանական, մաթեմատիկական, իրաւաբանական, տատուածաբանական և այլն)։ Առաջինները ժամանակին գերմանական պատմութեան մէջ՝ առանձնապէս ներկայ դարու առաջին և երկրորդ քառորդում՝ շատ կարևոր դեր են կատարել, իսկ ներկայումս, յիրավի, միայն զուարծական նպատակների են ծառայում Այս ինչ մասնագիտական ընկերութիւնները ունեն զուտ զիտական նպատակ՝ առանց սակայն զուարծական մասից հրաժարուելու։ Եւ սա շատ գովելի մի յատկութիւն է, որով ընդունակ է փայլել գերմանական ուսանողական ընկերութիւնը—գիտական նպատակը զուարծականով համեմել և այդպիսով մի սիրուն ներդաշնակութիւն առաջցնել—մի յատկութիւն, որ գժբախտաբար պակասում է հայ ուսանողական ընկերութիւններին, որովհետև մննք՝ հայերս սովորաբար լուրջ ենք, մտազրադ և բուն զուարծական երակից միանգամայն զուրկ։

Բացի վերոյիշեալ մասնագիտական ընկերութիւններից, վերջերս Գերմանիայում կազմակերպուեցին նաև աւելի լայն և բազմակողմանի հիմքերի վրայ գրուած ուսանողական ընկերութիւններ—Finkenschaft, «Social-missenschaftlicher Verein» և այն Յանկալի է, որ հայ ուսանողները հեռու չը մնան գերմանական թէ մասնագիտական և թէ այս նորակազմ ընկերութիւններից, որոնցից բազմակողմանի կերպով կարելի է օգտուել։

Հեղինակը IV հատուածում խօսում է Լայպցիցիք «Հայ ճեմարանական ընկերութեան» և Բերլինի երկու նախկին հայ ուսանողական ընկերութիւնների մասին։ 1897-ի բաժանուած խմբեր, սուր պառակառումներ այժմ այլ ես գոյութիւն չունեն Բերլինում։ Երկու և կէս տարի առաջ Բերլինում կազմակերպուեց տեղական ընդհանուր հայ ուսանողների միութիւն, որին մասնակցում են Բերլինի համարեա բոլոր հայ ուսանողները։ Այդ միութեան ժողովները մինչև անցեալ տարուայ ձմեռային կիսամեակի վերջը կանոնաւոր կերպով տեղի էին ունենում։ Բայց վերջերս, գժբախտաբար, առաջ եկան մի քանի խոշոր տարածայնութիւններ, որոնց հիմքը աւելի անձնական էր քան թէ գաղափարական—այսպէս որ այժմ Բերլինում դոյութիւն ունեն երկու ընկերութիւններ՝ «գրական» և «կրթական»։

Երբեմն Լայպցիգի «Ճեմ. Ընկերութիւնից» մի քանի ուսանողների, օր. ասպուածաբանների հեռու մնալը՝ հեղինակը բացատրում է աշխարհահայեցողութեան միայն սուր տարրերութեամբ։ Որքան մեզ յայտնի է, այդ երնոյթի հիմքը դարձեալ աւելի շատ անձնական պատճառներն են և մի քանիսի հիւանդու կասկածամտութիւնը և ոչ թէ աշխարհահայեցողութիւնը։ Աշխարհահայեցողութեան տարրերութիւնը ամեննեին արգելք չը պէտք է լինի, ընդհակառակն՝ մի ուժեղ խթան պէտք է լինի՝ մասնակցելու մի ընկերութեան, որ, ուրախութեամբ պէտք է նկատել, նեղ հիմքերի վրայ չէ դրուած և յարմար առիթ է ներկայացնում հաւաքուելու և իրար հետ շփուելու թէ ամենածայրայեղ արմատականին և թէ պահպանողականին։ Գոռհութեամբ մատնանիշ պէտք է անել և այն փաստը, որ առհասարակ գերմանական հայ ուսանողների շրջանում հանդուրժականութեան ոգին հետզհետէ աւելի և աւելի է արմատանում։ Սա մի վերին աստիճանի միսիթարական երևոյթ է և ցանկալի կը լինէր, որ այդ նոյն ոգին շարունակ վառ մնար նաև ապագայ գործունէութեան շրջանում՝ թէ մանկավարժական, թէ գրական, թէ հրապարակախօսական և թէ ուրիշ ասպարէզներում։

«Եւրոպայի հայ ուսանողական միութեան» մասին հեղինակի յայտնած հիմնական կարծիքներին համաձայն ենք, ունենք սակայն մի քանի վերապահումներ, որոնց վրայ անկարող ենք այստեղ կանգ առնել։

Իր զրքի վերջին հատուածում պ. Մելիք-Կարագեօղեանը՝ ի միջի այլոց խօսում է գերմանական և եւրոպական միւս հայ ուսանողների մէջ եղած տարրերութեան մասին։ Պարոնի բնորոշող նկատողութիւնները մեզ թւում են ճիշդ և հիմնաւոր։

Վ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ